† ԳԷՈՐԳ ԵՒԱՆԳՈՒԼԵԱՆ

Սեպտեմբերի 16-ին, երեկոյեան, Հերակլի բաղանիքում, յանկարծակի վախճանուեց Թիֆլիսի քաղաքագլուխ Գէորգ Եւանգուլեանը, 57 տարեկան հասակում։

Հանգուցեալը Թիֆլիսեցի էր։ Նա իր միջին կրթութիւնը աւարտել էր Թիֆլիսի նահանգական գիմնազիայում, իսկ բարձր կրթութիւնը Պետերբուրգի համալսարանի իրաւաբանական բաժնում։ Վերադառնալով հայրենիք նա հէնց առաջին տարիներից սկսած (1867 թուից) վարում էր պետական զանազան պաշտօններ, մասնակցելով միևնոյն ժամանակ հասարակական և ազգային գործերում։ 1883 թուականից Գ. Եւանգուլեանը թողնում է պետական ծառայութիւնը և մնում երդուեալ հաւատարմատարների դասակարգի մէջ։ Իբրև փաստաբան հանգուցեալը բաւական հռչակ ունէր։ 1897 թուին Գ. Եւանգուլեանը ընտրուեց Թիֆլիսի քաղաքագլուխ։ Թէ իբրև պետական պաշտօնեայ, թէ իբրև փաստաբան, քաղաքային իրաւասու, Ներսիսեան և Գայիանեան դպրոցների հոգաբարձու, Թիֆլիսի Փոխադարձ Վարկի Ընկերութեան խորհրդի նախագահ և թէ իբրև քաղաքագլուխ՝ Եւանգուլեանը ցոյց տուեց սովորական մարդկանց ընդունակութիւններից բարձր ընդունակութիւն և համոզմունքի ու կամքի հաստատութիւն։ Գ. Եւանգուլեանը Թիֆլիսի ինտելիգենցիայի նշանաւոր դէմքերից էր։

Հանգուցեալը իր ազգային-կրօնական հայեացքներով պատկանում էր մեր այն կուսակցութեան, որ յայտնի էր մեղուական անունով։ Եւանգուլեանը այդ կուսակցութեան ամենաազդեցիկ և տաղանդաւոր պարագլուխներից մէկն էր։ Մեր մամուլի մէջ նա իր հայեացքները պաշտպանում էր «Մեղու» և «Արձագանք» թերթերում և յամենայն դէպս մեր իսկական և կրթուած պահպանողականներից էր։